

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



### Բացվել է Թունաքիմիկատների որակի վերահսկողության լաբորատորիա

Օրերս երևանում տեղի է ունեցել Թունաքիմիկատների որակի վերահսկողության լաբորատորիայի բացման պաշտոնական արարողությունը, որին ներկա են գտնվել ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, ՀՀ-ում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Տայիսը, Սևնդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Արմեն Հայրապետյանը, Հայաստանում Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչ օգնական Գայանե Նասոյանը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ պաշտոնատար անձինք:

Լաբորատորիան բացվել է «Հայաստանում թունաքիմիկատների որակի վերահսկողության և դրանց մնացորդային քանակների նկատմամբ մոնիտորինգի աջակցության» ծրագրի շրջանակում, որն իրականացվել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից՝ ՀՀ կառավարության հետ համատեղ: Ծրագրի նպատակն է՝ հնարավորություն ստեղծել միջազգային չափորոշիչներին համապատասխան վերահսկել վաճառվող թունաքիմիկատների որակը և իրականացնել թունաքիմիկատների մնացորդային քանակների մոնիտորինգ՝ գյուղատնտեսական արտադրանքի բարելավման նպատակով:

Շնորհակալություն հայտնելով Հունաստանի կառավարությանը լաբորատորիայի ստեղծման գործում ցուցաբերած աջակցության համար՝ նախարար Սերգո Կարապետյանը ընդգծել է մեզանում նման լաբորատորիայի կարևորությունը: «Համոզված եմ, որ այս լաբորատորիան, որն իր տեսակով եզակի է և միակը տարածաշրջանում և հնարավորություն է ստեղծում գերծամանակակից սարքավորումների միջոցով ներկրվող թունաքիմիկատների փորձաքննություն իրականացնել, մեծապես կնպաստի մեր երկրում սևնդամթերքի որակի բարելավմանը», - նշել է նախարարը: Նախարարը շնորհավորել է Սևնդամթերքի անվտանգության պետական ծառայությանը նման լաբորատորիայի գործարկման առիթով և հույս է հայտնել, որ այն կօգնի հետագա աշխատանքների առավել արդյունավետ իրականացմանը: Իր հերթին ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Իոաննիս Տայիսը հույս է հայտնել, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համագործակցությունը այսուհետև ևս կարգապահ ու կենդանի, իսկ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերը կկրեն շարունակական բնույթ:

### Սկսվել է բերքահավաքը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով մեկնել է Արմավիրի մարզ, որտեղ Եղեգնուտ, Վարդանաշեն, Ջանֆիդա և Այգեշատ համայնքներում, մարզպետ Աշոտ Ղահրամանյանի ուղեկցությամբ, հետևել է բերքահավաքի աշխատանքներին:

Այցի ընթացքում նախարարը հավաստիացել է՝ բոլոր նշված համայնքներում բերքահավաքի աշխատանքներն ընթանում են բնականոն հունով, գյուղացիները գոհ են, տարին բերքառատ է, խնդիրներ այստեղ գրեթե չեն եղել: Եղեգնուտի ֆերմեր Սերյոժա Կարապետյանը, ով այս տարի իր տնտեսությունում 15 հեկտար տարածքի վրա սմբուկի և ևս 2 հեկտարի վրա ձմերուկի մշակություն է իրականացրել, արդեն սմբուկի առաջին բերքը հավաքել է: Ծավալներից ու որակից գոհ է, եղանակային պայմանները բարենպաստ են, ոռոգումը կազմակերպվել է պատշաճ մակարդակով: Ֆերմերը հատկապես ձմերուկի բարձր բերք է ակնկալում, որի բերքահավաքը կսկսվի արդեն մի քանի օրից: Վարդանաշեն համայնքում նախարարը եղել է տեղի ջերմոցային տնտեսություններից մեկում, որտեղ այս տարի շուրջ 1000 քմ տարածքի վրա բանջարեղեն է աճեցվել՝ լոլիկ, վարունգ և պղպեղ: Արտադրանքը հիմնականում իրացվում է տեղական շուկայում:

Մարզի Ջանֆիդա և Այգեշատ համայնքներում էլ կռահի և ծիրանի բերքահավաքի եռուզեռ էր: Այստեղ նույնպես բերքը գյուղացիներին գոհացնում է: պտղի ապրանքային տեսքը լավ է, ինչը թույլ է տալիս մեծածավալ արտահանումներ իրականացնել: «Արմավիրի մարզում այս տա-

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

### ՀՀ կառավարությունում

ՀՀ կառավարությունում խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, ՀՀ քաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանը և ՀՀ մարզպետները:

Խորհրդակցության ժամանակ քննարկվել են ՀՀ մարզերում, մասնավորապես, առողջապահության, ճանապարհաշինության, գյուղատնտեսության և քաղաքաշինության ոլորտներում իրականացվող պետական աջակցության ծրագրերի ընթացքը, առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը: Կառավարության ղեկավարը, ամփոփելով քննարկումը, կարևորել է շահագրգիռ գերատեսչությունների ու մարզպետարանների համակարգված համատեղ աշխատանքը և բարձրացված հարցերի լուծման առնչությամբ մի շարք հանձնարարականներ տվել պատասխանատու գերատեսչությունների ղեկավարներին և մարզպետներին:

### Ծիրանի առատ բերք է սպասվում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հրավիրել է խորհրդակցություն՝ պտուղբանջարեղեն վերամշակող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկվել են մթերման սեզոնի մեկնարկին առնչվող հարցեր, մասնավորապես, ծիրանի մթերման աշխատանքների կազմակերպման խնդիրը:

«Այս տարի առատ բերք է սպասվում, բերքահավաքի աշխատանքներն արդեն ընթացքի մեջ են, և վերամշակող ընկերությունները պետք է պատրաստ լինեն պատշաճ կերպով կազմակերպել մթերումները», - նշել է իր խոսքում նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարն առանձնահատուկ ընդգծել է մթերման աշխատանքները սահուն և ժամանակին կազմակերպելու անհրաժեշտությունը:

Նախարարի խոսքով, այս տարի հատկապես ծիրանի առատ բերք է սպասվում, և ակնկալվում է, որ արտադրության ծավալները կգերազանցեն անգամ 2013 թվականի ցուցանիշները: Նախարարը նաև հավելել է, որ այս տարի նախատեսվում է ապահովել ծիրանի մեծածավալ արտահանումներ՝ պայմանավորված Հայաստանի անդամակցությամբ Եվրասիական տնտեսական միությանը՝ հայտնելով, որ հայկական ծիրանը մեծ պահանջարկ ունի հատկապես ռուսաստանյան շուկայում:

Նախարարը հորդորել է նաև տեղական ընկերություններին ակտիվորեն մասնակցել արտասահմանյան գյուղատնտեսական ցուցահանդեսներին՝ վստահություն հայտնելով, որ դա կնպաստի ինչպես հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացմանը, այնպես էլ գործարար տղ կապերի հաստատմանն ու աշխուժացմանը:

Ծանոթանալով ընկերությունների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերին՝ նախարարն իր հերթին պատրաստակամություն է հայտնել՝ հնարավորության սահմաններում աջակցել լուծումներ գտնելու հարցում:

Գետիկն ունի զարգացման մեծ ներուժ	Էջ 3
Մարզում գյուղատնտեսական կոոպերատիվներն ակտիվ դերակատարում ունեն	Էջ 6
Մասնագետի խորհուրդ	Էջ 7



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Սկսվել է բերքահավաքը

1 հր րի պտուղ-բանջարեղենի և հատկապես խաղողի բարձր բերք է սպասվում, գարնան գյուղատնտեսական աշխատանքներն իրականացվել են ինչպես հարկն է, տարին բարենպաստ է, և 2015 թվականի վերջում մենք բոլոր առումներով շատ լավ ցուցանիշներ ենք ակնկալում»,- նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարը: Ըստ նրա՝ այս տարի ամբողջ հանրապետություն-



նում, ընդհանուր առմամբ, բարձր բերքատվություն է սպասվում, իրացման առումով խնդիրներ չկան, արդեն իսկ արտահանվել է շուրջ 600 տոննա ծիրան՝ 2014 թվականի ամբողջ տարվա 40 տոննայի դիմաց, շուրջ 800 տոննա կեռաս՝ 2014 թվականի 370 տոննայի դիմաց, 850 տոննա լուլիկ՝ նախորդ տարվա 220 տոննայի դիմաց և 2220 տոննա վարունգ՝ նախորդ տարվա 415 տոննայի դիմաց: Նախարարը նաև հավելել է, որ մինչև տարվա վերջ արտահանումների ծավալները կտրուկ ավելանալու են, այս տարի, ընդհանուր առմամբ, արդեն իսկ արտահանվել է շուրջ 24 600 տոննա պտուղ-բանջարեղեն, որը նախորդ տարվա համեմատությամբ, շուրջ 1000 տոննայով ավել է: Նախարարի հավաստմամբ՝ մթերումների հետ կապված խնդիրներ նույնպես չեն լինի, մասսայական բերքահավաքից հետո վերամշակող ընկերությունները կսկսեն նաև մթերումների կազմակերպումը:

ԴԱՇՏԱՅԻՆ ՕՐ

Հերթական ուսուցողական սեմինարը

Վերջերս Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի կողմից Չովաբեր համայնքում անկացվել է հերթական ուսուցողական սեմինարը: Համայնքի արտադրարարում գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների խնդրանքով, դաշտային օրվա քննարկման թեմաներն են եղել՝ «Խոշոր եղջերավոր անասունների փքանք հիվանդությունը և պայքարը դրա դեմ» և «Մանր եղջերավոր անասունների ճիշդաբալիում»:

Սևանի տարածաշրջանի գյուղատնտեսական խորհրդատու Սամվել Կիրակոսյանը մանրամասն ներկայացրել է այդ հիվանդությունների կանխարգելման միջոցառումները, օգտագործվելիք դեղամիջոցներն ու այլ խնդիրներ: Մասնակիցներն իրենց գոհունակությունն են հայտնել սեմինարի կազմակերպիչներից՝



ձեռք բերած նոր գիտելիքների համար և նշել, որ նման հանդիպումները, ցանկալի է, շարունակական լինեն: Սեմինարի ավարտին Սամվել Կիրակոսյանը և Գեղարքունիքի ԳԱՄԿ-ի համայնքների զարգացման գլխավոր մասնագետ Սարիբեկ Դավաթյանը պատասխանել է մասնակիցներին հուզող հարցերին, իսկ գյուղացիներին բաժանվել են սեմինարի թեմաներին համապատասխան խորհրդատվական թերթիկներ: Գեղարքունիքի ԳԱՄԿ

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Ձկնաբուծությունը հեռանկարային ճյուղ է

Վերջերս Երևանում մեկնարկել է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և «Եվրոֆիշ» միջազգային կազմակերպության հետ համատեղ կազմակերպված «Առևտրի համաշխարհային կազմակերպություն. մուտք դեպի շուկա և ձկնաբուծության բնագավառում առևտրին առնչվող խնդիրներ» խորագրով եռօրյա աշխատաժողովը: Աշխատաժողովին մասնակցում էին նաև «Եվրոֆիշ» միջազգային կազմակերպության տնօրեն Աի-նա Աֆանասևան, ներկայացուցիչներ շուրջ 20 եվրոպական երկրներից:

Ողջունելով աշխատաժողովի մասնակիցներին՝ նախարարը մասնավորապես նշել է, որ ձկնաբուծությունը հանրապետության ագրոպարենային ոլորտի առաջատար ճյուղերից մեկն է՝ կարևորելով ոլորտի զարգացումը՝ ինչպես երկրի պարենային անվտանգության ապահովման, այնպես էլ՝ գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտաքին ապրանքաշրջանառության բարելավման տեսանկյունից: «Ձկնաբուծությունը Հայաստանի համար հեռանկարային ճյուղ է և ունի զարգացման մեծ ներուժ, որի լիարժեք օգտագործումը հնարավոր է միջազգային առաջատար կազմակերպությունների հետ համագործակցության, զարգացած երկրների պրակտիկայում առկա արդիական ռեսուրսախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների աստիճանական ներդրման, միջազգային չափանիշներին բավարարող արտադրանքի ստեղծման և ձկնամթերքի արտահանման ավելացման միջոցով»,- իր խոսքում ընդգծել է նախարարը: Նախարարի խոսքով՝ վերջին տարիներին իրականացված քաղաքականության, մասնավորապես՝ արտահանման ուղղված պետական աջակցության արդյունքում էականորեն ավելացել են ձկան

արտադրության և արտահանման ծավալները: Ձկնաբուծությունից ստացվող համախառն արտադրանքի արժեքը կազմել է 28.7 մլրդ դրամ, որը գերազանցել է 2013 թվականի մակարդակը՝ 24.6 %-ով: 2011-2014թթ. ընթացքում ձկան արտադրությունն ավելացել է ավելի քան 2.0 անգամ: Եականորեն ընդլայնվել է արտահանման ծավալը, այն 2014 թվականին կազմել է 2706 տոննա՝ 2011 թվականի 1600 տոննա-



յի դիմաց: «Եվրոֆիշ» միջազգային կազմակերպության տնօրեն Աի-նա Աֆանասևան, իր հերթին, իր երախատագիտությունն ու շնորհակալությունը հայտնելով միջոցառման կազմակերպիչներին և գյուղատնտեսության նախարարությանը մեծ աջակցության համար, ինչպես է հայտնել, որ այս տարածաշրջանային աշխատաժողովը, որը համախմբել է եվրոպական շուրջ 20 երկրների փորձագետների, կարևոր նշանակություն կունենա ամուր համագործակցության ծավալման, փորձի փոխանակման և ոլորտի վերջին զարգացումների մասին համապարփակ իրազեկման առումով:

ՀԱՆԳԻՊՈՒՄ

Արտադրության ծավալները մեծանում են

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է կաթնամթերք արտադրող «Դուստր Մարիաննա», «Դուստր Մելանիա» և «Միլ կաթ» ընկերություններ՝ նրանց գործունեությանն ու ընթացիկ խնդիրներին ծանոթանալու նպատակով: Երբեք այդ ընկերություններում և տեղեկանալով ընկերությունների աշխատանքների մասին՝ նախարարը նշել է, որ կաթի արտադրության սեզոնայնությամբ պայմանավորված, արտադրության ծավալներն առավելագույն քանակի են հասնում մայիս-հունիս ամիսներին, և վերամշակողները չեն կարողանում ամբողջ կաթի ծավալը մթերել՝ կաթնամթերք արտադրելու համար:

Սերգո Կարապետյանը նաև տեղեկացրել է, որ որոշ համայնքներում միջնորդների գործունեության պատճառով, կաթը գյուղացիներից մթերվում է 100-110 դրամով, և նախարարությունը քայլեր է ձեռնարկում այս խնդիրն նույնպես լուծում տալու ուղղությամբ, որպեսզի գյուղացիները դժգոհություններ չունենան:



Սերգո Կարապետյանը նաև տեղեկացրել է, որ որոշ համայնքներում միջնորդների գործունեության պատճառով, կաթը գյուղացիներից մթերվում է 100-110 դրամով, և նախարարությունը քայլեր է ձեռնարկում այս խնդիրն նույնպես լուծում տալու ուղղությամբ, որպեսզի գյուղացիները դժգոհություններ չունենան:

Սերգո Կարապետյանը նաև տեղեկացրել է, որ որոշ համայնքներում միջնորդների գործունեության պատճառով, կաթը գյուղացիներից մթերվում է 100-110 դրամով, և նախարարությունը քայլեր է ձեռնարկում այս խնդիրն նույնպես լուծում տալու ուղղությամբ, որպեսզի գյուղացիները դժգոհություններ չունենան:



**ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ**

**ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՎ ԿԻՃԱԿԻ ՓԼԱՆԱՏՈՒՄ**

Ներկա փուլում Հայաստանի կառավարության համար հրապարակված է ջրային ոլորտի երկրորդ սերնդի բարեփոխումների ռազմավարության ընդունումը: Այդ խնդրին էր նվիրված օրերս կայացած ՀՀ ՊՆ Ջրային փորձագետական կոմիտեի և Ասիական Ջարգացման Բանկի կողմից կազմակերպված «Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտի ռազմավարություն» թեմայով աշխատաժողովը: Միջոցառման նպատակն էր՝ ներկայացնել ռազմավարության նախագծի հիմնական դրույթները, ծավալել մասնագիտական քննարկում, հանրայնացնել այն:

Ռազմավարության նախագիծը հիմնված է վերջերս իրականացված մի շարք ուսումնասիրությունների վրա՝ ջրամատակարար ընկերությունների կողմից սպասարկվող և նրանց սպասարկման տարածքից դուրս գտնվող համայնքներում ջրամատակարարման, կեղտաջրերի մաքրման և ջրահեռացման համակարգերի վերաբերյալ ուսումնասիրություններ, հաշվետվություններ սակագնային քաղաքականության և չհաշվառվող ջրի վերաբերյալ: Այս ուսումնասիրությունների, ինչպես նաև ներկայացված նախագծի նպատակն էր՝ ջրային ոլորտի ներկա վիճակի գնահատման արդյունքում, աջակցել ՀՀ կառավարությանը՝ ջրային ոլորտի բարեփոխման երկրորդ փուլի նախապատրաստման և իրականացման հարցում, որը թույլ կտա որդեգրել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտի կառավարման լավագույն մոդելներ:

Բարեփոխումների 2-րդ փուլի իրականացման նպատակով, ՀՀ կառավարությունն ընդունել է երկու ծրագրային որոշումներ՝ ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի գլխավորությամբ:



Նախագծի քննարկմանը մասնակցում էին՝ ՀՀ Ազգային ժողովի, կառավարության և շահագրգիռ նախարարությունների, միջգերատեսչական հանձնաժողովի, ՀՀ ՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և ջրամատակարարում իրականացնող ընկերությունների, ԿԲՄ Բանկի, ԱԶԲ-ի, ՀԲ-ի, ԵՆԲ-ի, ՎԶԲ-ի հայաստանյան գրասենյակների ներկայացուցիչները, ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության ջրի կառավարման նկարագիրն ու հիմնական մարտահրավերները, օրենսդրական, ինստիտուցիոնալ և կարգավորման շրջանակի գնահատումը, ջրային ոլորտում մասնավոր հատվածի մասնակցության մարտահրավերները, կատարված ֆինանսական և տնտեսական վերլուծությունները, պետական-մասնավոր համագործակցության առանձնահատկությունները, պայմանագրային ձևերի, ջրի սակագնի տարբերակները: Շահագրգիռ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների և լրացումների հիման վրա, ջրային տնտեսության պետական կոմիտեն կամփոփի փաստաթուղթը և վերջնական տարբերակը կներկայացնի ՀՀ կառավարության հաստատմանը:

**ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ընթացիկ տարում Հայաստանից պտուղ-բանջարեղենի արտահանման ծավալներն ավելացել են: Այսպես՝ հունիսի 22-ի դրությամբ, Հայաստանից արտահանվել է ավելի քան 27. 276 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակի 24.146 տոննայի դիմաց:

Մասնավորապես, արտահանվել է 2708 տոննա ծիրան՝ նախորդ ամբողջ տարվա 1791 տոննայի դիմաց, 982 տոննա կեռաս՝ նախորդ ամբողջ տարվա 370 տոննայի դիմաց, 9053 տոննա կաղամբ՝ նախորդ ամբողջ տարվա 3004 տոննայի դիմաց, 895 տոննա լոլիկ՝ նախորդ ամբողջ տարվա 219 տոննայի դիմաց, 2325 տոննա վարունգ՝ նախորդ ամբողջ տարվա 416 տոննայի դիմաց և 146 տոննա դդմիկ՝ նախորդ ամբողջ տարվա 53 տոննայի դիմաց:

Բացի այդ, 2015 թվականի այս պահի դրությամբ արդեն արտահանվել է 909 տոննա վաղահաս կարտոֆիլ (այս տարվա բերք)՝ 2014 թվականի նույն ժամանակահատվածի 485 տոննայի դիմաց, ինչպես նաև 2056 տոննա բոդլ ու ճակնդեղ՝ նախորդ ամբողջ տարվա 1030 տոննայի դիմաց: Հայկական պտուղ-բանջարեղենը հիմնականում արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Բելառուս, Ղազախստան և Լեհաստան:

**ՀՀ գյուղատնտեսության նախարարություն**

**ՀԱՍՏՆՔԱՅԻՆ**

**ԳԵՏԻԿՆ ՈՒՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԵԾ ՆԵՐՈՒԺ**

Այժմ կաթից պատրաստված Մոթալ պանիրը, որն արտադրվել էր Գեղարքունիքի մարզի ճամբարակի տարածաշրջանի Գետիկ համայնքում՝ իր համայնի և որակական հատկանիշներով, ուղղակիորեն զարմացրել է իտալացի խստապահանջ սպառողներին: Այն, գյուղապետ Սարգիս Այունցի նախաձեռնությամբ, արտահանվել էր Իտալիա, ներկայացվել ցուցահանդեսի, համմտեսի ու վաճառքի: Անցել է 2 տարի:

«Կարիտաս» կազմակերպությունը նախատեսել է գյուղում զարգացնել այժաբուծությունը, քանի որ բնական պայմանները նույնպես

արտադրությամբ, առաջարկվել է արտադրել հաղարջ, վերամշակել և արտահանել: Անցյալ տարեվերջին գյուղում բացվել է տարածաշրջանում գործող միակ եկեղեցին, որի կառուցումը հովանավորվել է արտերկրում գտնվող գետիկցի բարերարի կողմից: Նրա աջակցությամբ հովանավորվել է նաև գյուղի մանկապարտեզը: «Ագրոտուրիզմի ծրագրի հաջող իրականացմանը խոչընդոտում են միայն գյուղամիջյան վատթար ճանապարհները, որոնց նորոգումը հնարավոր է իրականացնել գյուղի փոքրիկ բյուջեով: Այստեղ ևս պետական աջակցության կամ բարե-



նպաստավոր են ճյուղի զարգացման համար: Գյուղապետ Սարգիս Այունցի տեղեկացմամբ, ծրագրվում է ստեղծել նաև կաթի վերամշակման արտադրամաս, իսկ պատրաստի արտադրանքի, մասնավորապես, Մոթալ պանիրի արտահանման նպատակով, էլ ավելի ընդլայնել իտալական կապերը: Գյուղում, 2012 թվականից, գործում է ագրոտուրիզմի ծրագիրը, որի շրջանակներում հյուրընկալել են Իտալիայից, Շվեյցարիայից և այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկների: «Նրանք սնվել են բացառապես օրգանիկ գյուղատնտեսական մթերքներով, հյուրերին մատուցվել է գյուղում արտադրված անարատ կաթ և կաթնամթերք, բարձրորակ մեղր, ինչպես նաև բուսական ծագման ազգային ուտեստներ և աղցաններ: Զբոսաշրջիկները հեռացել են մեծ գոհունակությամբ և կրկին վերադառնալու ցանկություն են հայտնել: Նրանց գրավել էր ոչ միայն Գետիկի համայնքի հիացալից բնությունը, այլև վերջինիս պարզևած համեղ սննդամթերքը»,- պատմում է գյուղապետը: Ավելի քան 470 բնակիչ ունեցող համայնքում հիմնական զբաղվածությունը անասնաբուծությունն է: Գյուղում գրեթե չկա մի ընտանիք, որը չի խնամում գյուղատնտեսական կենդանիներ: Խոշոր եղջերավոր անասունների թիվն արդեն գերազանցում է 500-ը, մանրինը՝ 300-ը: Սկսել են զարգացնել նաև մեղվաբուծությունը՝ տարեցտարի ավելացնելով մեղվաընտանիքների թիվը: «Անասնաբուծության զարգացման միտումը շարունակվում է, քանի որ գյուղացին համոզված է, որ բարձրորակ արտադրանքը սպառվում է առանց խնդիրների: Տվյալ պարագայում, անարատ սննդամթերքի հիմնական սպառողները ագրոտուրիզմի ծրագրում ընդգրկված 9-ը հյուրատներն են: Որակյալ սննդամթերքից բացի, ծրագիրն ավելի գրավիչ դարձնելու համար, հյուրատները նորոգվել, կահավորվել և համապատասխանեցվել են միջազգային չափորոշիչներին»,- հավելում է գյուղապետը: Ագրոտուրիզմի ծրագրի իրականացումը փոքրից նպաստել է աշխատատեղերի ստեղծման խնդրի կարգավորմանը՝ թե սպասարկման և, թե ծառայությունների մատուցման ոլորտներում: Ծրագիրն իրականացվել և հաջողությամբ տեղայնացվել է լեհական մոդելի հիման վրա: Ի դեպ, աշխատատեղեր են ստեղծվել նաև «Միասնական խաչ» կազմակերպության հետ համատեղ հիմնված գորգագործական արտադրամասում, որտեղ ներգրավվել են հիմնականում կանայք: Կազմակերպության հետ համատեղ իրականացման նոր ծրագրեր են մշակվում: Օրինակ, կարելի է զբաղվել հատապտուղների

գործերի հովանավորման անհրաժեշտությունը կա»,- նշում է Սարգիս Այունցը: Գյուղի մտահոգող խնդիրներից մեկն էլ, ըստ գյուղապետի, խմելու ջրի անբավարար մատակարարումն ու ոռոգման ջրի բացակայությունն է: Փաստորեն, գյուղացիներն ամբողջությամբ մշակում են տնամերձ հողատարածքները: Սակայն, ջրի բացակայության պատճառով ստացվում է բերքատվության ցածր արդյունք: Գյուղն ունի նաև 300 հա վարելահողեր, սակայն տեխնիկայի բացակայության պատճառով, մշակվում է դրանց փոքր հատվածը: Հողատարածքները հիմնականում վերածվել են խոտհարքների: Գյուղն ունի նաև 2093 հա արոտավայրեր, որոնք առայժմ, ելնելով անասնազիխաբանակից, շահագործվում են թերծանրաբերունվածությամբ: Գետիկում է գործում «Դիակոնիյա» բարեգործական կազմակերպության գրասենյակը, որը, շուրջ 23 տարի, անշահախնդիր կերպով աջակցում է գյուղի և տարածաշրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ անվճար տրամադրելով սերմացու, կարտոֆիլ, գյուղատնտեսական կենդանիներ, սննդամթերք և այլն: «Գյուղում պետք է աշխատատեղեր ստեղծվեն, քանի որ գյուղատնտեսության ոլորտը ռիսկային է: Այսպես, օրինակ, բերքն ամբողջությամբ կարող է ոչնչանալ տարերային աղետի հետևանքով, իսկ գյուղացին այդ դեպքում մնում է ձեռնուռայն: Կարելի է ստեղծել փոքր արտադրամասեր, մթերել և վերամշակել գյուղում գործող բոդլի ու կաշվե հումքը: Այլապես, գյուղապետարանն ապահովում է ընդամենը 7 աշխատատեղ»,- եզրահանգում է գյուղապետը:

Ինչ վերաբերում է Մոթալ պանիրին, ապա դրա պատրաստման տեխնոլոգիայի ցուցադրման ժամանակ այն իտալացիներին գրավել ու զարմացրել էր նաև նրանով, որ որպես մերան՝ օգտագործվել էր ոչ թե քիմիական բաղադրություն ունեցող կոմպո, այլ որոշ խոտաբույսեր: Ի դեպ, իտալական կողմին հետաքրքրել է նաև մեր ազգային թել պանիրը, որի պատրաստման տեխնոլոգիան այդպես էլ անհասականալի է եղել իտալացիների համար: Հայկական արտադրության նման պանրատեսակների պահանջարկն առկա է: Մնում է պայմաններ ստեղծել արտահանման մեծ հեռանկարայնություն ունեցող այս սննդամթերքների գաղափարային արտադրության կազմակերպման համար և դրանց համայնի հատկանիշների շնորհիվ արտահանել պահանջարկ վայելող ոչ միայն իտալական՝ այլև արտաքին շուկաներում ևս:

**Նեյի Սահակյան**



ԿՈՌՊԵՐԱՅԻՆ

«ԼՃԿԱՁՈՐ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՏԻՎԸ ԳՅՈՒՂԱՅՈՒ ԿՈՂՔԻՆ Է

Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի Այրում և Լճկաձոր համայնքների ֆերմերները համախմբվելով, դեռևս 2011թ., «ՕԶՍՖԱՍ»-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, ստեղծել են «Լճկաձոր» սպառողական կոոպերատիվը, որի կառավարումը տարածաշրջանի գյուղմթերք արտադրողներին աջակցելն էր:

«Տարածաշրջանի ֆերմերները խնդիրներ ունեին՝ կապված մրգի իրացման հետ: Նրանք կարողանում էին վաճառել իրենց արտադրած միայն որակյալ միրգը, մնացածը կամ իրացվում էր ցածր գներով, կամ էլ՝ մնում էր այգում ու խոտանվում: Կոոպերատիվի կառավարման աջակցությամբ, և դարձյալ «ՕԶՍՖԱՍ»-ի ֆինանսական աջակցությամբ, հիմնվեց «Միրգ» ՍՊԸ, որն ապահովում է ավելի քան 60 աշխատատեղ՝ ընդգրկելով հատկապես կանանց: Միաժամանակ լուծվել



Է նաև մթերման կայուն շուկա ունենալու խնդիրը»,- ասում է «Լճկաձոր» սպառողական կոոպերատիվի նախագահ Ռուսլան Անտոնյանը: Ավելի քան 1200 մ<sup>2</sup> մակերես ունեցող արտադրամասում ստեղծվել են բոլոր պայմանները՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան արտադրանք ստանալու համար: Գործարանն անցյալ տարի, ամռան ամիսներին, թողարկել է առաջին արտադրանքը: Մթերել են տարածաշրջանում աճող թե վայրի և, թե մշակվող պտուղներ և հատապտուղներ՝ մոշ, դեղձ, ազնվամորի, հոն, սերկևիլ, թուզ, վայրի տանձ, սալոր և այլն: Իսկ մթերված հումքի դիմաց գյուղացուն վճարել են կանխիկ: Ռուսլան Անտոնյանի տեղեկացմամբ, արտադրությունում ընդգրկվել են նաև կոոպերատիվի անդամներ:

Ի դեպ, «Լճկաձոր»-ի նախաձեռնությամբ, ինչպես նաև «ՕԶՍՖԱՍ»-ի ֆինանսական և խորհրդատվական աջակցությամբ, ստեղծվել է նաև մինչև 30 տոննա հզորությամբ թարմ պտղի սառեցման սառնարանային տնտեսություն, ինչը հնարավորություն է ընձեռում պահպանված միրգը, անհամեմատ բարձր գներով, վաճառել նաև ձմռան ամիսներին: «Լճկաձոր» սպառողական կոոպերատիվի առանցքային խնդիրը ֆերմերների եկամուտների ավելացմանը նպաստելն է: Արվում է հնարավորը, որպեսզի բարձրանա տնտեսությունների գործունեության արդյունավետությունը: «Ֆերմերը արտադրանքի, տվյալ պարագայում մրգի, իրացման հետ կապված՝ խնդիրներ չպետք է ունենա: Նրա գործը արտադրելն է, բերքահավաքի անկորուստ կազմակերպումը: Մենք էլ՝ մեր անելիքներն ու պարտավորություններն ունենք: Թիմային աշխատանքն է արդյունք տալիս»,- հավելում է Ռուսլան Անտոնյանը:

Նախատեսվում է, եվրոպական չափանիշներին համապատասխան՝ արտադրամասը վերասարքավորել նաև բանջարեղենի վերամշակման նպատակով: Կոոպերատիվի կառավարման խորհրդի նախագահ Էդիկ Էվանիսյանի կարծիքով, «Լճկաձոր»-ի գործունեությունը նաև ռազմավարական նշանակություն ունի տարածաշրջանի համար: Նրա տեղեկացմամբ կայուն շուկայի ապահովման շնորհիվ յուրաքանչյուր տարի ֆերմերների եկամուտները կավելանան 30-40%-ով: Իսկ առաջիկայում շահառուների թիվը կհասնի 2000-ի:

Նելլի Սահակյան

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Առսար բերքը իրացման հետ կապված խոչընդոտներ չի առաջացրել

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանի ուղեկցությամբ, այցելել է Խանջյան, Հացիկ և Այգևան համայնքներ՝ ծանոթանալու ծիրանի բերքահավաքին և իրացման հետ կապված հարցերին:



ծիրանի այգիներ են: Մարզպետի խոսքով՝ միայն ծիրանի բերքն այս տարի կկազմի 45-50 հազար տոննա՝ այգետերերին ապահովելով շուրջ 4.5-5 մլրդ դրամի համախառն եկամուտ:

Խանջյան համայնքում մարզպետը ֆերմեր Չոհրաբ Ավագյանի ծիրանի այգում հետաքրքրվել է բերքահավաքի ընթացքի և իրացման հետ կապված հարցերով: Այգետերը մեծ գոհունակություն են հայտնել ստացված բերքից՝ միաժամանակ վստահեցնելով, որ ծիրանի իրացման խնդիր մինչ այժմ չեն ունեցել:

Հացիկ և Այգևան համայնքներում այգետերը ևս գոհ էին ստացված բերքից և իրացման գործընթացից: Աշխատելով մի քանի արտահանող կազմակերպությունների հետ՝ նրանք մարզպետին

վստահեցրել են, որ մինչ այժմ որևէ խոչընդոտի չեն հանդիպել և կարողացել են ապահովել բերքի իրացումը: Ա. Ղահրամանյանն իր խոսքում ուրախությամբ փաստել է, որ այս տարի մարզում գյուղացիական տնտեսություններն առատ բերք են աճեցրել: Ըստ նրա՝ մարզում պտղատու այգիները կազմում են 8413 հա, որից 4156 հա

Մարզպետը տեղեկացրել է նաև, որ հունիսի 29-ին մարզ է այցելելու Եվրոպայի ամենախոշոր մեծածախ առևտրի բազայի տնօրենը՝ ծանոթանալու մարզի ծիրանի, դեղձի, ինչպես նաև խաղողի այգիներին: Մարզպետի փոխանցմամբ՝ երկրորդ համագործակցություն սկսելու շուրջ ընդհանուր հայտարարի գալու դեպքում, մարզն իրացման շուկայում ձեռք կբերի նոր գործընկեր:

Սահակյանուշ Արոյան  
Արմավիրի ԳԱՄԿ

Ագրարային համալսարանը նախագծել է պրոդայրու այգիների միջբնային և մերձբնային մշակության մեթոդներ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Գյուղատնտեսության մեքենայացման և էլեկտրոֆիկացման գիտա-հետազոտական ինստիտուտի

հետազոտողների կողմից մշակվել և նախագծվել է պտղատու այգիների միջբնային և մերձբնային մշակության մեթոդներ, որը մշակում է պտղատու այգիների ծառերի միջբնային և մերձբնային տարածությունները և կատարում ակոսահանում՝ ոռոգումը կազմակերպելու համար, իսկ պաշտպանիչ օդագոտին թույլ չի տալիս վնասել ծառաբները:



Կատարված աշխատանքները գոհացնող համարելով՝ պրոդայրու Գ. Պետրոսյանը նշել է, որ մեքենան շատ արդյունավետ է նաև բազմամյա մշակաբույսերի ոչնչացման համար. «Եթե տարեկան 2 անգամ նույն դաշտում կատարվի մշակում, ապա հաջորդ տարի նույնիսկ մեկ անգամ մշակումը բավարար կլինի, որովհետև բազմամյա մշակաբույսերն այս եղանակով ոչնչանում են»: Մեքենան պատրաստվել է Վանաձորի «Չինվան» գործարանում. ՀԱԱՀ-ը պատրաստ է կազմակերպել հետագա արտադրությունը:

Սկսնակ գործարարների համար

Օրերս Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ հիմնադրամի Կոտայքի մարզային մասնաճյուղում կայացավ «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագրի ներկայացումը՝ սկսնակ գործարարների համար: Ծրագիրը մեկնարկել է դեռևս 2015 թ. ապրիլի 14-ին Նոր Գեղի համայնքում՝ Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից իրականացվող, ԱՄՆ ՍՀԳ (USAID) «Գործընկերություն» հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակներում:

Սկսնակ գործարարները ծրագրի ընթացքում ստացել են բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիք և համապատասխան գործարար հմտություններ, որի արդյունքում մշակել են անհատական գործարար ծրագրեր: Ծրագրին մասնակցած 18 սկսնակներից 12-ը ներկայացրել են գործարար ծրագրեր, որոնք արտադրության և ծառայությունների ոլորտից են: Ծրագրի շրջանակում, սկսնակ գործարարը հնարավորություն ունի օգտվելու ՓՄՁ ՉԱԿ-ի ֆինանսական աջակցության գործիքից:

www.anau.am

Քննարկվել են շուկայի ընդլայնման հիմնահարցերը

Վերջերս ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանի և մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանի ուղեկցությամբ, աշխատանքային այցով «Ոսկե այծ» (Golden Goat) այծի պանրի գործարանում էին: Ընկերությունը գտնվում է Եղեգնաձոր քաղաքում և հիմնադրվել է 2000 թվականին՝ Խաչիկ Մարտիրոսյանի կողմից:

Նախընտանյան գործունեության մեկը՝ Վայոց ձորի կլիմայական բարենպաստ պայմաններն են և Էկոլոգիապես մաքուր լինելը:

Գործարանում կատարած շրջայցի ժամանակ Հ. Սարգսյանը ծանոթացել է ընկերության աշխատակիցների աշխատանքային պայմաններին և արտադրվող պանրի տեսակներին: Ընկերությունն արտադրում է մոտ 8 տեսակի պանիր, այդ թվում՝ «Եղեգնաձոր», «Լոռի», «Ալպյան», «Չանախ»: Ինչպես նշեց ընկերության հիմնադիր և տնօրեն Խաչիկ Մարտիրոսյանը, որակյալ պանիր ստա-

Հանդիպման ժամանակ ներկայացվեց նաև ընկերության գնային քաղաքականության, կաթի մթերման պայմանների, ինչպես նաև արտադրանքի արտահանման և շուկայի ընդլայնման հետ կապված հիմնահարցերի մասին:

Նշեց, որ 2002թ.-ից ընկերության կողմից արտադրվող այծի պանիրն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, իսկ 2004թ.-ից՝ ԱՄՆ:

Ընկերության տնօրենի հետ ունեցած զրույցի ժամանակ Վայոց ձորի մարզպետը նշել է, որ մարզպետարանը պատրաստ է աջակցել և օժանդակել ընկերությանը՝ առավել արդյունավետ գործունեություն ծավալելու նպատակով:



ԿԵՆՍԱՎԱՌԵԼԻՔ

ՆՈՐ ՀՈՐԻՋՈՆՆԵՐ

Հաճախ է պատահում, որ վաղվա օրն իրեն լավ պատկերացնող մի գաղափար է հնչեցնում, որն ուշագրավ է և քննարկման արժանի: Բայց մինչ շահագրգռվածները փորձում են առանձնացնել և հասկանալ անհայտը, նորի մեջ հինը փեսնող բերում է փաստարկներ, թե ինչու այն հնարավոր չէ իրականացնել: Ինչդիրն այն է, որ նման փաստարկներ իրոք գոյություն ունեն, բայց միայն նրա համար, որ հեղուղականորեն վերացնեն և ճամփա բացեն նորի համար:

Կենսավառելիքի համար այդ փաստարկներից էին բարձր ինքնարժեքը. պարզ էր, որ նոր տեխնոլոգիաների զարգացման հետ պետք է դուրս գար հողերի հյուսիս-արևմտյան վտանգը՝ մեծ կենսազանգվածների հետ կապված, որը նույնպես չէր լուծվել, կենսաօրգանական երկրագործության զարգացման հետ. վերջապես ամենահիմնավորը հողերի մրցակցային օգտագործումն էր՝ վտանգելով պարենի և անասնակերի արտադրությունը, որը նույնպես մերժվեց, քանի որ անօգտագործելի հողեր գրեթե ամենուր կան, արդեն հնացել է ցելի գաղափարը և խիտ ու անընդմեջ ցանքերն են խրախուսվում:



Նույն մշակաբույսի տարբեր մասեր կարելի է օգտագործել միաժամանակ՝ այդ երեք կարևոր նպատակների համար:

Այնպես որ, եկել են արդեն այն ժամանակները, երբ ՌԴ Կենսավառելիքի ասոցիացիան հերթական միջազգային կոնգրեսն է կազմակերպում «Կենսազանգված. վառելիք և էներգիա - 2015», թեմայով, որտեղ հանդիպում են գյուղատնտեսության և նավթարդյունաբերության մասնագետները, կենսատեխնոլոգները, էներգետիկներն ու գիտնականները և քննարկում ոչ թե կենսավառելիքի վերաբերյալ մի՞նչ հարուցող խոչընդոտներ, այլ դրա արտադրության երկրորդ և երրորդ սերնդի տեխնոլոգիաները և կենսավառելիքի համաշխարհային շուկայի տենդենցները:

Հետաքրքրական է, որ մոտավորապես նույն ժամանակ, մարտ ամսին, Բրյուսելում կայացավ «Գյուղատնտեսության ապագան - 2015» 8-րդ վեհաժողովը, որի հիմնական կազմակերպիչներն էին Եվրոպայի հողատերերի կազմակերպությունը (European Landowners' Organization) և շվեյցարական Syngenta ընկերությունը: Քննարկվող գլխավոր խնդիրներ հայտարարվեցին պարենային գլոբալ անվտանգությունը և գյուղատնտեսության կայուն զարգացումը: Նշվեց, որ համաշխարհային գյուղատնտեսության ներուժը հսկայական է, և չնայած բնակչության 11%-ը պարենով ապահովված չէ, միևնույն է, պարենի առաջարկն այսօր ավելին է, քան պահանջարկը: Պարզապես պետք չէ մոռանալ, որ աշխարհում ամեն տարի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալներով, դեն է նետվում ավելի, քան մեկ միլիարդ տոննա մթերք, որին ուղեկցում են այլ կորուստներ (տես թերթի նախորդ համարը): Արդյունքում ստացվում է մի թիվ, որ համեմատելի է իրականում սպառվող պարենի հետ, այսինքն՝ խնդիրը կարելի է լուծել ճիշտ կառավարման, նաև ճիշտ բաշխման միջոցով: Վեհաժողովում այդ մտքի հետ՝ այսինքն պարենային անվտանգությունը ոչ միայն գյուղմթերք արտադրելու ավելացման հաշվին լուծելու մասին, ընդհանուր համաձայնության գալով՝ նշվեց նաև, որ գյուղատնտեսությունը հնարավորինս էկոլոգիապես պահպանող զարգացող կղանակ է, որն անհրաժեշտ է զարգացնելու և նրանով պայմանավորված բնության բեռնվածությունը ոչ միայն զգալիորեն թեթևացվի, այլև դա արվի գյուղատնտեսության միջոցով: Հայտարարվեց, որ արդեն մուտք են գործել երրորդ արդյունաբերական հեղափոխություն, որի գլխավոր չափորոշիչներն են՝ կենսատեխնոլոգիան, անասնապահական տարածքների ոռոգողագույնը, տնտեսական ընթացքների կառավարման էլեկտրոնային համակարգերը: Դրա շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, հարմարվել կլիմայի փոփոխություններին, ագրոպարենային հատվածը մրցունակ դարձնել և արդյունքում լուծել պարենային անվտանգության խնդիրը:

Syngenta ընկերությունն իր հերթին ներկայացրել է արդեն իսկ 2013-ից մեկնարկած գործնական քայլերը՝ Արդյունավետ աճի պլանը, որը ոչ միայն բերելու է գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման արդյունավետության բարձրացմանը, էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանմանը, այլև՝ ֆերմերների եկամուտների բարձրացմանը: Անցած ժամանակաշրջանում ընկերությունն արդեն ստեղծել է 3500 փորձարարական ֆերմերային տնտեսություններից բաղկացած ցանց և վերապատրաստել 4,5 միլիոն ֆերմեր ասիական պետություններից, որոնք բացի դրանից առաջ իրենց կողմից մշակվող հողերից, նոր տեխնոլոգիաներ կիրառելու են մինչ այդ անմշակ 800 հազար հեկտարի վրա: Այս տեմպերով ծրագիրն ընթանալու է մինչև 2020 թվականը:

Վերադառնալով կենսավառելիքին՝ նշենք, որ հետևողականորեն տարվող աշխատանքը և դրա ճիշտ կառավարումը միշտ էլ բերելու է դրական արդյունքի: 2010-2013 թվականներին կենսավառելիքով համընդհանուր հրապուրման արդյունքում, սնունդ-անասնակեր-կենսավառելիք հավասարակշռությունում վերջինիս գնեքը բարձրացան. սպասվում էր, որ այն կբերի հումքի թանկացմանը և այսպես կոչված «կանաչ էներգիայի» զարգացման արգելակմանը: Բայց ըստ հիմնավորված կանխատեսումների, իրականում 2014-2015 թթ.՝ շուկայի հագեցվածությունը, տեղի ունեցավ հումքի գների անկում, որը համաշխարհային շուկայում իր գրավչությամբ որոշիչ ճանաչվեց և զարկ տվեց կենսավառելիքի արտադրությանը՝ չնայած այդ ժամանակ նավթի գներն արդեն շրջափելի նվազել էին:

Արդյունքում, ըստ կենսատեխնոլոգիայի կենսավառելիքի հիմնական նվաճումները հետևյալն են. 2014-ի ավարտին արտադրանքն աշխարհի մակարդակով հասել է 85 միլիոն տոննայի, ընդ որում՝ ԱՄՆ-ում E15 բենզինի (15 % կենսատեխնոլոգիայով պարունակող) օգտագործումը դարձավ զանգվածային, Բրազիլիայում առաջարկվում և սպառվում է դրա լայն տեսականի՝ E20, E30, E85, իսկ Եվրոպական երկրներում վերջինս դարձավ ամենապահանջվածը, թերևս գնի՝ 1 եվրո/լիտր, համար: Ակտիվացան նաև երրորդ աշխարհի երկրները. E5-ը, որով մեկնարկեց Եվրոպան, հաջողությամբ սպառվում է Եթովպիայում, Սուդանում, Վիետնամում և Հնդկաստանում, E10-ը՝ Քենիայում, Անգոլայում, Նիգերիայում և Աֆրիկայի այլ երկրներում:



Սրա հետ մեկտեղ մի շարք երկրներ՝ Բրազիլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Չինաստանը, սկսեցին օգտագործել կենսատեխնոլոգիայի ոչ թե որպես միայն ներքին այրման շարժիչների վառելանյութ, այլ նաև որպես հումք՝ քիմիական արդյունաբերության համար: Պետությունները, հասկանալով, որ երկու դեպքում էլ վերամշակող գործարանները բացի հավելյալ արժեքից նաև աշխատատեղեր են ապահովում, սկսեցին սուբսիդավորել դրանց կառուցումը, քանի որ նման 250 միլիոն լիտր էթանոլ տարեկան արտադրող տիպային գործարանը 2883 մարդու ապահովվել է աշխատանքով, դրան ավելացրած 497 ուղղակի և 136 անուղղակի աշխատատեղ՝ հումք ապահովող գյուղացիական տնտեսությունում: Չնայած ավելացած, ֆերմերներն ու պարզապես հողատերերը, որոնք տրամադրում են այդ նպատակների համար իրենց անօգտագործելի հողերը, լրացուցիչ սուբսիդավորում են ստանում: Եվ վերջապես, արդյունաբերական տեխնոլոգիաների մի շարք մշակումներ նույն հումքից, օգտագործելով տարբեր միկրոօրգանիզմներ, գյուղատնտեսական հումքում պարունակվող տարբեր շաքարներից ստանում են տարբեր պլաստմասաներ, դեղանյութեր, դիմապարարման պարագաների լայն տեսականի: Այս բոլորին հարկ է նաև ավելացնել, որ արժեքավոր այս նյութերի բազմազանությունը ստացվում է ոչ միայն հատուկ աճեցված գյուղատնտեսական հումքից, այլև ցանկացած գյուղատնտեսական թափոններից. այն պակաս կարևոր չէ փայտամշակման և անտառները թափոններից խնամելու հարցերից:

ԿՐԹ-ԱԿՆՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Ագրոպարենային ոլորտի կրթության և խորհրդատվության, ուսումնափորձական և գիտաարտադրական բազայի զարգացման նպատակներով, Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում, դեռևս 2013թ.-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով ստեղծվել է Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնը: Ծրագրով նախատեսված ԱՅՈՒԱԿ-ը ստեղծվել է ՀԱԱՀ-ի Բալախովիտ և Ոսկեհատ ուսումնափորձական տնտեսությունների միավորման բազայի վրա, գործում է ՏՏ և ԻԾ կենտրոնի կազմում:

Կենտրոնը նպատակ ունի՝ ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ներմուծման ճանապարհով վերազինել համալսարանի, Նրա մասնաճյուղերի և քոլեջների նյութատեխնիկական բազան, ապահովել համալսարանի ու Նրա մասնաճյուղերի, քոլեջների, ինչպես նաև հանրապետության գյուղատնտեսական ոլորտի այլ քոլեջների շրջանավարտների՝ աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան զբաղվածությունը, իրականացնել գյուղական երիտասարդության համար կրթական համակարգի մատչելիությանն ուղղված միջոցառումներ և պետական հովանավորում, ներգրավել ֆինանսավորման նոր աղբյուրներ, կադրերի վերաորակավորման և վերապատրաստման միջոցով լուծել գյուղական բնակչության զբաղվածության հետ կապված սոցիալական հարցերը, ինչպես նաև մատուցել ագրարային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի՝ շրջակա ֆերմերային տնտեսություններին մեքենայացված գյուղատնտեսական աշխատանքների պայմանագրային ծառայություններ:

Ծրագրի շրջանակներում արտաքին և ներքին շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, ֆերմերների, ԳԱՄԿ-երի և այլ խորհրդատվական կազմակերպությունների, կենտրոնի գործունեության լուսաբանման և ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար, ՀԱԱՀ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի աշխատակիցները նախագծել և պատրաստել են միասնական ուսուցողական-տեղեկատվական կայքէջ՝ [www.ticas.anau.am](http://www.ticas.anau.am): Կայքէջի նախագծման, համապատասխան բաժինների և ենթաբաժինների պատրաստման աշխատանքներին զուգահեռ, իրականացվել է անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում, խմբագրում, բովանդակության մուտքագրում և ձևավորում:

Կայքում ներկայացված է ընդհանուր ծրագիրը, կենտրոնի ստեղծման պատմությունը, գործունեությունը, ամբողջական տեղեկատվություն կենտրոնի տեխնիկական միջոցների մասին (մեդիա նյութեր և մեթոդական ցուցումներ): Կայքում գործում է նաև անհատական խորհրդատվության՝ առցանց հարց ու պատասխանի համակարգ:



ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՍՏՈՂՈՎ

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՊԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ

Հունիսի 10-ին, Կանանց ձեռներեցության միջազգային համաժողովի շրջանակներում, կայացավ Էքսպո ցուցահանդես՝ կանանց կողմից վարվող և նրանց մասնակցությամբ գործող ձեռնարկությունների ընդգրկմամբ: Մասնակցելու համար հրավիրվել են ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող կին արտադրողներ, ինչպես նաև միջազգային և տեղական կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներ:

Էքսպո ցուցահանդեսը կազմակերպվել էր Կանանց ձեռներեցության երևանյան



շաբաթի շրջանակներում, որը Հայաստանում անցկացվում է առաջին անգամ՝ Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (aywa.am) և ՀՀ Կին ձեռներեցների ցանցի (businesswoman.am) նախաձեռնությամբ: «2014թ. ՀԵԿԱ-ն, ԱՄՆ Պետդեպարտամենտի ֆինանսավորմամբ, իրականացնում է «Համատեղ ջանքեր» հանուն զարգացման» ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի Ախթալա, Շամլուխ, Մեծ Այրում, Ճոճկան և Նեղուց համայնքներում իրականացրել ենք «Հատապտուղների փաթեթավորում, ինչպես նաև խոտաբույսերի հավաքում» ծրագիրը, որի արդյունքում, ցուցահանդեսում ներկայացվել են փաթեթավորված խոտաբույսեր: Այդպիսով, փորձում ենք աջակցել կանանց՝ տեղական ռեսուրսների միջոցով ստեղծելով աշխատելու հնարավորություն: Ծրագրում ընդգրկված կանանց թիվը հասնում է 40-ի, ովքեր, գիտելիքների հարստացման նպատակով, մասնակցել են ուսուցողական դասընթացների: ՀԵԿԱ-ն փնտրում է հովանավորներ՝ չորանոցների ստեղծման համար»,- ասում է ՀՀ Լոռու մարզի ՀԵԿԱ համակարգող Արմինե Դարչինյանը: Քրիստինե Ղազարյանը (Արագածոտնի մարզի բնակչուհի) զբաղվում է չրագործությամբ: Չիր արտադրում են բոլոր մրգատեսակներից, որոնք ներկայացրել էր ցուցադրման: Հունքը գնում են թե Արագածոտնի և, թե այլ մարզերի ֆերմերներից: Աշխատանքներն իրականացնում է մայրիկի Գայանե Ղազարյանի հետ համատեղ, ով վերջերս արժանացել է «2015թ. Կին հերոս»-ի կոչման: Չրագործ կանայք նույնպես ընդգրկված են ՀԵԿԱ-ի գործարար կանանց ցանցում: Կին գործարարը շուտով կվարկավորվի: «Նախատեսել ենք ձեռք բերել հիմնական միջոցներ՝ չիր ստանալու նպատակով: Այդպիսով՝ կանանց համար կստեղծենք նոր աշխատատեղեր»,- նշում է տիկին Ղազարյանը:

Համաժողովի շրջանակներում, կայացավ «Նոր զարգացումների հեռանկար» Կանանց ձեռներեցության միջազգային համաժողովը, որի մասնակիցների կողմից ընդունվեց բանաձև, որն առաջարկում է կանանց ձեռնարկատիրական և հասարակական միավորումների արդյունավետ համագործակցությունը՝ պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, մասնավոր հատվածի, ինչպես նաև դոնոր կառույցների, ֆինանսավարկային կազմակերպությունների հետ՝ ազգային և միջազգային մակարդակներում ընդլայնելով համագործակցությունը: Նախատեսվում է Կին ձեռներեցների համաշխարհային ասոցիացիայի կոնգրեսն անցկացնել Երևանում՝ 2017 կամ 2018թթ.:

Կանանց ձեռներեցության միջազգային շաբաթի շրջանակներում ստորագրվեցին հուշագրեր՝ տեղական և միջազգային կառույցների հետ: Մասնավորապես՝ Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան և ՀՀ Կին ձեռներեցների ցանցը դառնում են կանանց առաջնորդության գլոբալ ցանցի անդամ և սերտորեն համագործակցելու են կանանց առաջնորդության եվրոպական կառույցների, ինչպես նաև Մոնակոյի հետ՝ այլընտրանքային և էկոլոգիական էներգիայի ոլորտում:

Շաբաթը կազմակերպվել էր Կին ձեռներեցների համաշխարհային ասոցիացիայի (FCEM.org) հովանու ներքո, որի լիիրավ անդամ է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան: Կին ձեռներեցների համաշխարհային ասոցիացիան, որը հիմնադրվել է 1945թ., «Կին ձեռներեցների» ամենամեծ կազմակերպությունն է աշխարհում՝ շուրջ 5 մլն. անդամներով, աշխարհի ավելի քան 120 երկրներից: Փորձի փոխանակման նպատակով կայացան ճանաչողական այցեր դեպի հայկական ձեռնարկություններ: Հունիսի 10-ին կայացավ նաև «Կին ձեռներեց դեսպան» մրցանակաբաշխությունը:

«Մեր նպատակն է՝ հերթական անգամ ընդգծել կանանց ձեռներեցության կարևորությունը մեր երկրում, ինչպես նաև հնարավորություն տալ մեր երկրի կին ձեռներեցներին՝ շփվելու համաշխարհային կառույցներում ընդգրկված և տարբեր երկրներում ձեռնարկություններ ղեկավարող կին ձեռներեցների հետ, որը կարող է բերել նոր համագործակցության»,- նշել է ասոցիացիայի նախագահ Լիլիթ Ասատրյանը:

Կանանց ձեռներեցության երևանյան շաբաթի նպատակներն են՝ նպաստել Հայաստանի և արտերկրի կին ձեռներեցների ու գործարարների միջև կապերի ստեղծմանը և համագործակցության ամրապնդմանը, Հայաստանում կանանց ձեռներեցության խթանմանը, փոքր ու միջին ձեռնարկատիրության համար գործարար միջավայրի բարելավմանը, ներդրումների իրականացմանը և համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը:

Նելլի Սահակյան

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆ ԱԿՏԻՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ՈՒՆԵՆ

Արմավիրի մարզում գյուղատնտեսությունը զարգացնելու, ոլորտում առաջընթաց գրանցելու և ֆերմերային տնտեսություններին օգնելու համար մարզի տարբեր համայնքներում ստեղծվել են երկու տասնյակից ավել գյուղատնտեսական կոոպերատիվներ: Ստեղծված կոոպերատիվների շնորհիվ գյուղատնտեսական աշխատանքներն ավելի հեշտ և համակարգված են կատարվում տնտեսություններում:

Արմավիրի մարզի Յացիկ համայնքում գործող «Նոր Նաիրի» այգեգործական կոոպերատիվը հիմնադրվել է 2009 թվականին՝ «Ամբողի» հայաստանյան գրասենյակի «Գյուղատնտեսության զարգացման կոոպերատիվների հզորացման» ծրագրի շրջանակներում: Սկզբնական շրջանում կոոպերատիվն ուներ 48, 2013 թվականից՝ արդեն 60 անդամ: Այգեգործական կոոպերատիվի նախագահ Յամլետ Արշակյանը նշում է, որ միասնական աշխատանքի շնորհիվ, կարող է ասել, որ իրենց կոոպերատիվը կայացել է: «Չնայած կան թերություններ,- ասում է կոոպերատիվի նախագահը, բայց աշխատում ենք համակարգված և արդյունավետ: Կոոպերատիվի անդամները ծավալում են տարբեր գործունեություն. 8-ը զբաղվում են չրագործությամբ, մնացածը՝ այգեգործությամբ և անասնապահությամբ»: Յամլետ Արշակյանը ցավով է նշում, որ Յայաստանում գյուղատնտեսական կոոպերատիվները չեն կայանում, և գլխավոր պատճառներից մեկն այն է, որ հայ ֆերմերը կարծես թե վախենում է միավորվելուց: Միավորվելու դեպքում ֆերմերներն ավելի լայն հնարավորություն կունենան արդյունավետ գործունեություն ծավալելու՝ բերքն իրացնելու, ոռոգման հարցերը ճիշտ կարգավորելու, թունաքիմիկատներ ձեռք բերելու և այլ խնդիրներ լուծելու համար: Ըստ Յ. Ար-



յանը կարծում է, որ ապագան գյուղատնտեսական ասոցիացիաներին են, ինչպես զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրներում, այնպես էլ Յայաստանում որա անհրաժեշտությունը կա: 2007-ին, երբ հիմնում էր ասոցիացիան, որոշակի վախ ուներ, որ չի կայանա: Բայց Նաիրոյի տարիներն ապացուցեցին, որ այն լավագույն գաղափարն էր, որ կարող էր օգնել գյուղացուն՝ խնդիրներ լուծելու համար: Ասոցիացիան սկզբնական շրջանում 66 անդամ ուներ, այնուհետև, տարիների ընթացքում, անդամների թիվը կրճատվեց: Այսօր մարզի կայացած գյուղատնտեսական կոոպերատիվներից մեկը կարելի է համարել: Յացիկ ինչ է պետք, որ գյուղատնտեսական կոոպերատիվները երկրում կայանան, պատաս-



շակյանի՝ այսօր կոոպերատիվ տնտեսությունները մեծ դեր ունեն հայաստանում գյուղատնտեսության զարգացման գործում, եթե ինքնին հայ գյուղացին հասկանա որա կարևորությունն ու անհրաժեշտությունը: «Ամբողի» օգնությամբ կոոպերատիվ տնտեսությունը ձեռք է բերել տրակտոր, սրսկիչ, խոտհիչ, գութան, փոցիկ և այլն. նույնիսկ վճարովի ծառայություն է մատուցում ոչ միայն համագյուղացիներին, այլև՝ հարակից գյուղերի բնակիչներին: Բացի պտղաբուծությունից, Յամլետ Արշակյանը զբաղվում է նաև չրագործությամբ: Արտադրանքի մեծ մասն արտահանում է, մյուս մասն էլ իրացնում տեղական շուկայում: Բակում արևային ջրանոց է պատրաստել, ինչպես նաև ձեռք է բերել էլեկտրական ջրանոց: Ցավով է նշում, որ մեր հանրապետությունում կոոպերատիվը, որպես բիզնես-կառույց, չի ընկալվում և այն դեռ կայանալու տեղ ունի: Բայց, որ կոոպերատիվ տնտեսությունների և գյուղացիական ասոցիացիաների անհրաժեշտությունը կա, արդեն փաստ է: «Գետաշեն» գյուղատնտեսական ասոցիացիայի նախագահ Մկրտիչ Պողոս-

խանում է՝ ոչ միայն ավիրվածությունն ու աշխատասիրությունն են Եական դեր խաղում, այլև հավատը՝ սկսված գործի նկատմամբ: Չնայած բազմաթիվ դժվարություններ և թերություններ կան, բայց կոոպերատիվի ղեկավարը հավաստում է, որ բավականին դրական քայլեր կատարվել են: Ամենակարևորը՝ կոոպերատիվն իր տրամադրության տակ ունի տրակտոր, առավելագույն պայմաններով կարողանում են ձեռք բերել գյուղացիական փոխառություններ և վարկեր:

Մկրտիչ Պողոսյանը զբաղվում է պտղաբուծությամբ, ունի դեղձի և կեռասի այգիներ, մտածում է հողատարածքներ ձեռք բերելու և նոր այգիներ հիմնելու մասին: Ըստ նրա՝ այսօր Յայաստանում գյուղատնտեսությունն այն ճյուղն է, որ զարգացնելու դեպքում, հնարավոր կլինի զարգացած և հարուստ երկրների շարքում դասվել: Իսկ զարգացած գյուղատնտեսություն ունենալու համար, կոոպերատիվների և ասոցիացիաների տեսքով միավորվելը լավագույն տարբերակն է, ինչպես ժողովրդական առաձև է ասում՝ գյուղ կկանգնի, գերան կկտորի:

Սահակյանուշ Արոյան Արմավիրի ԳԱՄԿ



ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳ

ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ԿՆԵՄԻՂՈԿՈՊՏՈՉ

Թռչնաբուծությունն այսօր Հայաստանի ամենադինամիկ զարգացող ճյուղերից է, որի զարգացմանը շատ հաճախ խոչընդոտում են ինվազիոն հիվանդությունները՝ հատկապես կնեմփոկոպտոզը (թռչունների քոս):

Հայտնի է, որ ինվազիոն



հիվանդությունների տարածմանը նպաստում են թռչունների խնամքի և պահվածքի պայմաններում առկա թերացումները, ոչ լիարժեք կերակրումը և ամենակարևորը՝ պլանային անասնաբուժական միջոցառումների բացակայությունը:

Կնեմփոկոպտոզ հիվանդությունը մեծ տարածում ունի հատկապես փոքր թռչնաբուծական տնտեսություններում, իսկ խոշոր համալիրներում դրա տարածվածությունը պայմանավորված է պահվածքի պայմաններով, հատկապես այն արձանագրվում է հատակային պահվածքի դեպքում: Հիվանդության տարածմանը նպաստում են թռչնահամալիրները, սինամտրոպ թռչունների՝ ճնճողուկներ, ագռավներ, ծիծեռնակներ և այլն մուտքը:

Վերջին տարիներին Հայաստանում կնեմփոկոպտոզի տարածմանը նպաստեց նաև այլ երկրներից առանց մանրագնի անասնաբուժական հետազոտության ընտանի և դեկորատիվ թռչունների տարերային ներկրումը:

Կնեմփոկոպտոզը հանդիպում է հանրապետության գրեթե բոլոր շրջաններում և յուրաքանչյուր տարի զգալի վնաս է հասցնում թռչնաբուծությանը: Անասնաբուժական կնեմփոկոպտոզով կարող է հիվանդանալ ամբողջ թռչնագլխաքանակի 75 և նույնիսկ ավելին:

Ինչպես նշում են բազմաթիվ հեղինակներ (Վ. Բ. Դուբինսկի, Ֆ. Մ. Օռլովան, Ն. Տ. Լիտվիշևսկի և ուրիշներ), քոսի տիգը թռչունների օրգանիզմում առաջացնում է տարբեր ախտաբանական փոփոխություններ, որի հետևանքով դանդաղում է նրանց աճն ու զարգացումը, ընկնում մթերատվությունը, հատկապես ձվատվությունը:

Տգերի կողմից թռչունների ոտքերի ախտահարված հատվածներում սկզբում մաշկն այտուցվում և կարմրում է, թեփուկներն անջատվելով՝ մաշկի մակերեսից բարձրանում են: Առաջանում են բորբոքային օջախներ, որոնք գնալով վեր են ածվում եղջերային բարակ շերտի: Սկսվում է ուժեղ քորը: Հիվանդ թռչունը երկար ժամանակ կանգնում է մեկ ոտքի վրա և կտցահարում է ախտահարված հատվածները՝ խախտելով մաշկի ամբողջականությունը: Արտազատված արյունն ու ավիշը խառնվելով փոշու, հողի և կեղտի հետ՝

առաջացնում են կետեր, որոնք հետագայում շերտավորվելով առաջացնում են բուրգանման կուտակումներ, անգամ մեռուկացված հատվածներ:

Հիվանդությունն ախտորոշում են համաճարակաբանական տվյալներով, կլինիկական նշանների և մաշկից կատարված քերուկների տզաբանական հետազոտության ճանապարհներով:

Բուժման հիմքում ընկած է տզերի ոչնչացումը և ախտահարված մաշկի վերականգնումը:

Բուժման նպատակով առաջարկվում են հետևյալ դեղերը՝

Կեչու կուպրը տաքացնում են մինչև 40°C և լցնում են մետաղյա թասի մեջ, այնուհետև մեկ րոպե տևողությամբ թռչնի ոտքերը ընկղմում են կուպրի մեջ, մշակումը կրկնում են 3 օրից՝ մինչև նշանների անհետացումը:

Բորաթթվային վազելինը քսում են թռչնի ոտքերին, կրկնում 2 օրից՝ մինչև նշանների անհետացումը:

Ավերսելտինի քսուքը քսում են ախտահարված մաշկին 1-3 շաբաթ տևողությամբ՝ մինչև նշանների անհետացումը:

Պերմետրինի 0,1% լուծույթի մեջ մեկ րոպե տևողությամբ ընկղմում են թռչնի ոտքերը, կրկնում 3 օրից՝ մինչև նշանների անհետացումը:

Հիվանդությունը կանխարգելելու նպատակով, պետք է թռչուններին պարբերաբար հետազոտել, հիվանդներին առանձնացնել և բուժել: Մինչև մեկ տարեկան մատղաշները պետք է պահվեն մեծահասակներից առանձին: Անհրաժեշտ է հետևել թռչնանոցների սանիտարական վիճակին:

Հ. Զ. Նաղաշյան  
Անասնաբուժական  
գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

ԳՅՈՒՂՍԹԵՐԻ ՎԵՐԱՍՇԱԿՈՒՄ

ՉՐԵՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Չորամիրգը բնական վիթամինահանքային կոմպլեքս է, որն ամենահին «սննդային հավելումն է»:** Առաջին չորամիրգը հայտնվել է արևի շնորհիվ, երբ հասած մրգերը վերածվել են չրի՝ դառնալով իսկական մրգի շտեմարան: Չիրը բնական քաղցրավենիք է, որից երբեք չեն գիրանում: Այն շար օգտակար է ճարպակալությամբ, երկամային անբավարարությամբ տառապողներին և նույնիսկ՝ շաքարային դիաբետոսով: Ընդհանրապես մրգերը չորանում են երեք եղանակով՝ արևի տակ, ստվերի տակ և քիմիական եղանակով: Այն գեղեցիկ փաթեթավորված ու վառվող չրերը, որ մենք գնում ենք առևտրի կետերից, երբեմն մշակված են քիմիական եղանակով:

Արևի տակ չորացրած չիրն, իհարկե, արտաքին տեսքով գիջում է, բայց օգտակար է: Սև սալորի չիրն ունի շատ անուշ համ ու բույր: Վերջինիս բուժիչ հատկությունների մասին իմացել են դեռևս Հռոմեական կայսրությունում: Սալորացիրը պարունակում է A, B, B<sub>2</sub>, PP, C վիթամիններ, կալիում, մագնեզիում, երկաթ, ցինկ, յոդ: Սալորը պարունակում է այնպիսի նյութեր, որոնք լավացնում են աղիների աշխատանքը, մաքրում օրգանիզմը խոլեստերինի ավելցուկից և շատ լավ օգնում լեղաքարային հիվանդությունների դեպքում: Իսկ սալորի ամենազվազոր հատկություններից մեկը մաշկին երիտասարդություն հաղորդելն է: Մագնեզիումն ու կալիումն անհրաժեշտ

որից հետո կարելի է ավելի խիտ դասավորել ծիրաններն ու տեղափոխել ստվերոտ, բայց քամոտ վայր ու թողնել, որ դրանք վերջնական չորանան: Ծիրանաչիրն օժտված է բազմաթիվ օգտակար հատկություններով, որոնցից շատերով օժտված է հասուն միրգը: Սա է պատճառը, որ բժիշկները խորհորդ են տալիս հղի կանանց ու երեխաներին իրենց սննդակարգում ծիրանաչիր ավելացնել: Կան ծիրանաչիր պատրաստելու շատ եղանակներ: Կարելի է չորացնել ծիրաններն՝ առանց կորիզը հանելու: Դա կօգնի ներսում ավելի շատ վիթամիններ պահել: Այդպիսի չորացումն արևի տակ տևում է մոտ մեկ շաբաթ, որից հետո նոր կարելի է ծիրանները ստվերոտ, քամոտ տեղ տե-



են հիպերտոնիկներին:

Դե իհարկե, եթե խոսում ենք չրերից, պետք է հասկանալ, որ խոսքը ծիրանաչիր մասին է: Ծիրանը հայկական միրգ է՝ սիրված ողջ աշխարհում: Այն անչափ հյութեղ է, ունի նուրբ և քնքուշ համ: Ցավայի է միայն, որ ծիրանի սեզոնը երկար չէ: Բայց սա մեծ խնդիր չէ, քանի որ մարդիկ սովորել են երկարեցնել իրենց հաճույքը՝ մրգերից պատրաստելով ձմեռվա համար պահածոներ ու կոմպոտներ: Բայց այդ ամենն այնքան էլ օգտակար չէ մեր օրգանիզմի համար, քանի որ պարունակում են մեծ քանակությամբ շաքար: Մենք խորհուրդ ենք տալիս մրգերից չիր պատրաստել:

Վաճառքում հաճախ կարելի է հանդիպել վառ դեղին գունավորմամբ, հյութեղ տեսքով ծիրանաչիր, որ խիստ տարբերվում է նրանից, ինչ կստանաք, եթե տանը չորացնեք միրգը: Հավատացե՛ք, որ գեղեցիկ տեսքը դեռ չի խոսում անվտանգության մասին: Նման ծիրանաչիրը պարունակում է քիմիկատներ, որոնք էլ երկար ժամանակ կանխարգելում են գունաթափումը: Նման վտանգավոր գնումներից խուսափելու համար ավելի լավ է պարզապես սովորել, թե ինչպես ճիշտ չորացնել ծիրանը տնային պայմաններում: Եվ այսպես՝ տանը 1 կգ ծիրանաչիր պատրաստելու համար անհրաժեշտ է մոտ 4 կգ ծիրան: Ընդ որում, ծիրանները պետք է լինեն շատ հասունացած, բայց առանց վնասվածքների: Դրանք լավ լվանալուց հետո պետք է բաժանել երկու մասի, հանել կորիզն ու 10 րոպեով թողնել կիտրոնաջրի մեջ /1 լ ջրին՝ 8 թեյի գդալ կիտրոնի հյութ/: Այնուհետև պետք է ծիրանները տեղավորել որևէ ճաղվանդակի վրա՝ միջի մասով դեպի վեր, և այնպես, որ մի ծիրանը չկապի մյուսին:

Լավագույն արդյունք ստանալու համար, ցանկալի է չորացնել ծիրանը 3-4 օր արևի տակ,

դափոխել:

Ընդունված է նաև ծիրանաչիրը ջեռոցում պատրաստելը: Նման չորացման համար ևս պետք է նախապես կիսել ծիրաններն ու 10 րոպեով թողնել դրանք կիտրոնաջրի մեջ: Ծիրանաչիր պատրաստելու այս եղանակը տևում է մոտ 1-2 ժամ: Ընթացքում կարևոր է թույլ չտալ, որ ջերմաստիճանն անցնի 120 աստիճանից, քանի որ մրգերը կարող են վառվել: Ընթացքում նաև պետք է պարբերաբար թափահարել այն ցանցը, որի վրա ծիրաններն են դրված: Բնական է, որ ջեռոցի դուռը փակել չի կարելի:

Ծիրանաչիրն այդ գեղեցիկ ծիրանագույնը հաղորդում է կարոտինը՝ պրովիտամին A-ն, սակայն լյարդի և վահանագեղձի խնդիրներ ունեցողներին խորհուրդ չի տրվում տարվել այս մրգով, քանի որ կարոտինը կարող է ջլուրացվել օրգանիզմի կողմից: Ծիրանաչիրը հարուստ է մագնեզիումով, որն անհրաժեշտ է հիպերտոնիայի և սակավարյունության դեպքում: Իսկ կալիումի պարունակության շնորհիվ, այն անփոխարինելի է նրանց համար, ովքեր մտածում են իրենց սրտի ու անոթային համակարգի մասին կամ հաճախ են տարատեսակ դիետաներ պահում:

Նույնիսկ ծիրանաչիրով պատրաստում են ապուր, որը և՛ շատ համեղ է, և՛ օգտակար: Դրա համար պետք է վերցնել 500 գր ծիրանաչիր՝ անպայման արևի տակ չորացրած և կորիզով լինի, որպեսզի չփափկի ու չճխվի: Այն լցնել էմալպատ ամանի մեջ ու վրան այնքան եռջուր լցնել, որ ծածկի չիրը: Մի քանի րոպե դնել գազօջախին ու եփելու ընթացքում ավելացնել շատ քիչ հիլ, մեխակ և դարչին: Կարելի է նաև սառը վիճակում մատուցել:



ՀԵՏԱՔՈՒՔԻՆ Է...

ՓԻՓԵՐԹ

Փիփերթը փիփերթագինների ընտանիքի միամյա, երկամյա կամ բազմամյա իլիկաձև արմատով խոտաբույս է: Հայտնի է նաև մոլոշ, բալբա, բաղջուկ, ճնճղկաբլիթ, ճնճղկահաց, հաց ու պանիր, աղջկա կտակ, խորդենի անվանումներով: Հայրենիքը հարավային Աֆրիկան և Ավստրալիան է: Լատիներեն համարժեքն է malva-ն, որը թարգմանաբար նշանակում է՝ փափկեցնող:



Յողունը կանգուն է, ուղղաձիգ կամ գետնին պռակած, թավոտ-մազածածկ: Յողունների բարձրությունը փոփոխվում է 30-50 սմ, երբեմն՝ ավելի բարձր: Տերևներն ամբողջական բլթակավոր են, կլորավուն, հիմքում՝ սրտաձև, հերթադիր, երկարակողմ: Ծաղիկները երկսեռ են տերևներում, հազվադեպ՝ մեկական, մանուշակագույն, վարդագույն, վառ կարմիր, սպիտակ, տեղադրված են փնջերով տերևածոցերում, ծաղկաբաժակի տերևիկները հինգն են, կա նաև ենթածաղկաբաժակ՝ երեք տերևիկով: Ծաղկաթերթերը հինգն են, վարդագույն, այլ բծերով: Բազմաթիվ առէջքները ստորին մասում կազմում են հոծ խողովակ: Պտուղն ունի սկավառակի տեսք՝ բաղկացած մի քանի սերմերից, որոնք երկկամաձև են, կենտրոնում ունի փոսիկ: Պտուղները համեղ են, տերևներն ու մատղաշ ընձուղներն օգտագործում են սննդի մեջ: Դրանք շատ են սիրում ուտել երեխաները: Ծաղկում է հունիս-սեպտեմբեր ամիսներին: Դեռևս Պլինիոսը գրում է. «Ով ամեն օր խմի փիփերթից թեյ, դրանով կպաշտպանի իրեն պատահական հիվանդություններից»: Պարունակում են կարոտին, վիտամին C, ներկանյութ և այլն:

Վրո (պատող), հակաբորբոքային միջոց: Փիփերթից ստանում են դեղին ներկանյութ: Բուժական նպատակներով օգտագործվում են բույսի տերևները, ծաղիկները, սերմերը, արմատները: Ծաղիկները հավաքում են չբացված վիճակում, տերևները՝ նախքան ծաղկելը: Չորացնում են բաց ծածկի տակ՝ բարակ շերտով: Տերևներն ու ծաղիկները պահում են՝ ապակյա, իսկ արմատները՝ փայտյա տարայի մեջ: Ա. Ամասիացին խորհուրդ է տվել փիփերթի-մոլոշավարդի հյութով թրջոց դնել ջերմության հետևանքով առաջացած աչքացամփ ժամանակ: Կիրառել է այն չոր հազի, երիկամների, միզապարկի և միզուղիների հիվանդությունների ապաքինման համար: Ժողովրդական բժշկության մեջ փիփերթի ծաղիկներն օգտագործվում են որպես խորխաբեր միջոց: Բույսի վերգետնյա մասի եփուկով կատարում են ողողումներ: Խմում են տաք վիճակում՝ հազի և թոքախտի դեպքում: Սերմերի եփուկն ու թուրմը օգնում է բրոնխիտի, հազի, շնչուղիների հիվանդությունների դեպքում:

Բազմացվում է կտրոններով, երբեմն՝ նաև սերմերով: Կտրոններով բազմացումը կատարվում է ջերմատներում վաղ աշնանից մինչև գարուն: Այդ նպատակի համար պետք է օգտագործել գետի խոշորահատիկ, լավ լվացած ավազ:

Տնկելուց առաջ կտրոնները պետք է թողնել ստվերում, որպեսզի մի քիչ թառամեն: Այնուհետև անհրաժեշտ է կտրվածքները ծածկել փայտածխի փոշով և հետո տնկել: Կտրոններն արմատակալում են 20-25 օրվա ընթացքում:

Ջերմատներում աշնան արմատակալած կտրոնները այլ տեղ փոխադրել չի կարելի: Որպեսզի բույսերը բավարար սնունդ ունենան, անհրաժեշտ է նախօրոք ավազաշերտի տակ սննդարար հող լցնել: Ջրելիս պետք է զգուշանալ ավելորդ խոնավությունից, քանի որ կտրոնները դրանից արագորեն նեխում են:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

Բուժիչ բույս, որը «վերակենդանացնում է»:

Ասում են, հնում չինացիները այրոցից պարրասպի են ոգելից խմիչք, որի մնացորդները գտնվել են 9000 տարվա վաղեմության անոթներում: Կարծիք կա, որ հին ժամանակներում կրոնում այն ուներ նշանակալի դեր: Ավանդության համաձայն՝ Քրիստոսի փշե պսակը պարրասպիված է եղել հենց այրոցնուց:

Այրոց խորհուրդ են տալիս օգտագործել սրտի կաթվածից հետո, քանի որ այն մեծացնում է արյան հոսքը դեպի սրտի անոթներ: Այն նպաստում է սրտամկանի բջիջների ակտիվությանը և սնուցմանը: Ընդհանրապես, 50-ից բարձր տարիքի յուրաքանչյուր մարդ պետք է հաճախ օգտագործի այրոցի թուրմ:



Այրոցի այլ կիրառություններ

Այրոցն ամենահանգստացնող բույսերից է: Այն օգնում է հոգևածության դեպքում, էներգիայի պակասի, վատ քնի, խռատ շնչառության, գլխապտույտի, սրտխփոցների, հուզմունքի, նյարդայնության և ականջներում աղմուկի դեպքում:

ներն են՝ հայտնի կարմիր և ավելի քիչ հայտնի սպիտակ այրոցները: Խորհուրդ է տրվում այրոցի կեղևը հավաքել գարնանը և օգտագործել թարմ կամ չորացված վիճակում:

Պտուղները հավաքում են աշնանը, երբ նրանք վառ կարմիր գույն են ստանում:

Ծաղիկները՝ ցանկալի է սպիտակները, հավաքել բողբոջներով կամ բացվելուց առաջ: Ամենալավ ժամանակն է ապրիլից հունիսը: Այն պետք է չորացնել բարակ շերտերով:

Այրոցի կաթիլներ

Ավելի քան 20գ մանրացված տերևները և ծաղիկները լցնել 200 մլ 70%-անոց սպիրտի մեջ և խառնել: Թողնել, որպեսզի խառնուրդը հանգստանա 3 շաբաթ, հետո քամել: Խմել օրական 20 կաթիլ՝ մի փոքր հեղուկի հետ: Այս կաթիլները կանխում են անոթային և նյարդային համակարգի հիվանդությունները:

Այրոցի օշարակ

Յարիչի մեջ լցնել մոտավորապես 1 կգ այրոց, այն ծածկել ջրով՝ այնպես, որ ջուրը 2-3 սմ ծածկի հատապտուղները, ապա խառնել և թողնել 24 ժամ: Այնուհետև դնել թույլ կրակի վրա և եռալուց հետո եփել կես ժամ: Քամել հեղուկը և սառելուց հետո պահել սառնարանում: Լցնել ստերիլիզացված շշերի մեջ և օրական խմել 6-12 ճաշի գդալ: Պահպանման ժամկետը անսահմանափակ է:

Օգնում է սրտի կաթվածի դեպքում:



խուլթաթերիսի բարձր քանակը և բուժելի երակների կարծրացումը, ուլթեր տառապում են սրտային հիվանդություններով, կարող են հաջողությամբ բուժվել այրոցով:

Այս բույսը լայնորեն կիրառվում է արյունատար համակարգի առողջության պահպանման համար, բարձր ճնշման և սրտամկանի թուլության ու սրտային առիթմիայի դեպքում: Այն, որպես արդյունավետ բուժիչ միջոց, ընդունվում էր սրտի հիվանդության և սկզբնական շրջանում, նաև՝ արդեն խորացված շրջաններում:

Այն կարելի է օգտագործել նաև ավելորդ քաշը նվազեցնելու համար, քանի որ օգնում է հեռացնել օրգանիզմից ավելորդ ջուրը: Այս հատկության շնորհիվ այրոցն օգտակար է նաև ցելյուլիտի, այտուցների և հոդերի հիվանդությունների համար: Այն նաև բարեբար ազդեցություն ունի խոցային կոլիտի և մարսողական խնդիրների դեպքում, սակայն խորհուրդ չի տրվում հղի կանանց կամ կերակրող մայրերին: Բուժման համար այրոցի ամենատարածված տեսակը:

Advertisement for Agronews 2015. Includes subscription rates for 1, 6, and 12 issues, and contact information for the publisher.